«ԱԶԱՏ ՔՎԵ» ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ստեփանավան համայնք, Լոռու մարզ
Քվեարկության օր՝ 25 հոկտեմբերի, 2026 թ.

2 նոյեմբերի, 2026 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ....3
1. ԱՄՓՈՓԱԳԻՐ....4
2. ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ....8
2.1. Առաքելության մասին....9
2.2. Մեթոդաբանություն....10
2.3. Դիտարկման սահմանափակումները....11
3. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ....12
3.1. Համատեքստ....13
3.2. Իրավական շրջանակ....13
3.3. Ընտրական հանձնաժողովներ....14
4. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ....15
4.1. Ընտրական տեղամասերի մատչելիություն....16
4.2. Թեկնածուների և կուսակցությունների հայտարարագրեր....16
4.3. Վարչական ռեսուրսի օգտագործման ռիսկեր....17
4.4. Լրատվամիջոցներում հրապարակված այլ տեղեկություններ....18
4.5. Քարոզարշավի շեշտադրումները և համայնքի ղեկավարի ընտրության կարգը....18
5. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ....20
5.1. Տեղամասերի բացում....21
5.2. Միջամտություն հանձնաժողովի աշխատանքին և կողմնակի անձանց ներկայություն....21
5.3. Քվեարկության գաղտնիություն....24
5.4. Քվեաթերթիկներ և ինքնասոսնձվող դրոշմանիշեր....25
5.5. Ընտրական փաստաթղթերի պահպանում և ընտրողների գրանցում....26
5.6. Կարգ ու կանոն տեղամասերում և հարակից տարածքում....27
5.7. Ուղիղ հեռարձակում....28
5.8. Քվեարկության ավարտ և ձայների հաշվարկ....28
5.9. Քարոզչություն քվեարկության և դրան նախորդող օրը....29
6. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ....31
6.1. Մասնակցություն....32
6.2. Արդյունքներ....32
6.3. Արդյունքների ամփոփումը թիվ 25 ԸԸՀ-ում....33
7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ....34
8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ....37
Կենտրոնական ընտրական հանձնաժողովին....38
Թիվ 25 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին....38
Ազգային ժողովին....39
Ոստիկանությանը....39
Տեղական ինքնակառավարման մարմիններին....39
Ընտրություններին մասնակցող կուսակցություններին....39
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....41
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ՝ ԸՍՏ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ....42
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ....43
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՎԿԱՅԱԿՈՉՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ....44

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԸԸՀ	ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
ԸՕ	Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՏԸՀ	տեղամասային ընտրական հանձնաժողով
ՏԻՄ	տեղական ինքնակառավարման մարմիններ
ՎԻՎՕ	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք
ՔՕ	ՀՀ քրեական օրենսգիրք

ԳԼՈՒԽ

01

ԱՄՓՈՓԱԳԻՐ

2026 թվականի հոկտեմբերի 25-ին Ստեփանավան համայնքում համամասնական ընտրակարգով անցկացվեցին համայնքի ավագանու ընտրություններ: Ընտրություններին մասնակցում էին չորս կուսակցություններ՝ «Գործարար», «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր» և «Ուժեղ Հայաստան» (քվեաթերթիկի համարների հերթականությամբ): Համայնքում կազմավորված էր 29 ընտրական տեղամաս, ընտրողների ցուցակներում (ներառյալ լրացուցիչ ցուցակները) ընդգրկված էր 19 353 ընտրող:

«Ազատ քվե» դիտորդական առաքելությունը դիտարկել է ընտրությունների նախընտրական շրջանը և քվեարկության օրը: Նախընտրական շրջանում առաքելությունն ուսումնասիրել է ընտրական տեղամասերի մատչելիությունը, թեկնածուների և կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերը, տեղամասային ընտրական հանձնաժողովների ղեկավար կազմը և վարչական ռեսուրսի օգտագործման ռիսկերը: Քվեարկության օրը առաքելության 26 դիտորդ դիտարկել է քվեարկությունը և ձայների հաշվարկը համայնքի բոլոր 29 ընտրական տեղամասերում:

Ընդհանուր գնահատական: Առաքելությունը չի արձանագրել այլ անձի փոխարեն քվեարկելու, բազմակի քվեարկության, քվեատուփի լցոնման կամ արդյունքների կեղծման հաստատված դեպքեր (25/16 տեղամասում ընտրողների ցուցակում այլ անձի ստորագրության վերաբերյալ հաղորդումը պահանջում է լրացուցիչ ուսումնասիրություն, տե՛ս բաժին 5.5): Միաժամանակ արձանագրվել են ինքնասոսնձվող դրոշմանիշերի համատարած տպագրական թերություններ, քվեարկության գաղտնիության հետ կապված բազմաթիվ դեպքեր, տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձի ներկայություն և միջամտություն հանձնաժողովի աշխատանքին, ընտրական փաստաթղթերի պահպանման կարգից շեղումներ, վստահված անձանց կողմից հանձնաժողովի աշխատանքին միջամտելու փորձեր և դիտորդների նկատմամբ ճնշման դեպքեր: Քվեարկության և դրան նախորդող օրը թեկնածուների սոցիալական ցանցերի էջերում տարածվել են քարոզչական բնույթի նյութեր: Արձանագրված ընթացակարգային խնդիրների մեծ մասը վկայում է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները լրացուցիչ գործնական վերապատրաստման կարիք ունեն: Նախընտրական շրջանում արձանագրված տեղամասերի անմատչելիությունը և հայտարարագրերի թերի լրացումը համակարգային բնույթ ունեն:

Հիմնական արձանագրումները.

- **Միջամտություն հանձնաժողովի աշխատանքին**: 25/24 (Գյուլագարակ) տեղամասում Գյուլագարակ համայնքի ղեկավար Խաչիկ Վարդանյանը 09:30-ից 17:20 ընկած ժամանակահատվածում բազմիցս, հիմնականում առանց վկայականի, մտել է տեղամասային կենտրոն և քվեարկության սենյակ և փորձել միջամտել հանձնաժողովի աշխատանքին: Մի շարք տեղամասերում վստահված անձինք փորձել են միջամտել ընտրական գործընթացին (25/2 տեղամասում վստահված անձը քվեարկության ժամերին հաշվել է քվեարկության կտրոնները), միևնույն կուսակցության՝ սահմանվածից ավելի վստահված անձինք

ներկա են եղել տեղամասում, արձանագրվել են թեկնածուների ներկայության դեպքեր:

- **Քվեարկության գաղտնիություն**: Արձանագրվել են բաց քվեարկության բազմաթիվ դեպքեր, որոնք հիմնականում պայմանավորված են ընտրողների ցածր իրազեկվածությամբ, հանձնաժողովի անդամների ոչ բավարար պատրաստվածությամբ և դրոշմանիշերի խնդիրներով: 25/4 տեղամասում ընտրողը նկարահանել է քվեարկության խցիկում:
- **Ինքնասոսնձվող դրոշմանիշեր**: Դրոշմանիշերի տպագրական թերությունները համատարած բնույթ են կրել. դրանք արձանագրվել են 11 տեղամասում. տպագրված տվյալները տեղաշարժված էին դրոշմանիշի եզրերի նկատմամբ: Մի շարք տեղամասերում դրոշմանիշերը փակցվել են սոսնձով, 25/6 տեղամասում մեկ քվեաթերթիկին փակցվել է երկու դրոշմանիշ, 25/24 տեղամասում երկու անգամ մարվել է դրոշմանիշ փակցված քվեարկության ծրար:
- **Ընտրական փաստաթղթերի պահպանում**: 25/24 և 25/2 տեղամասերում դրոշմանիշերի և կնիքի պահպանման համար նախատեսված չհրկիզվող պահարանը բաց է եղել (25/24-ում՝ գրանցամատյանի գրառմամբ 07:32–08:02):
- **Կարգ ու կանոն**: Մի շարք տեղամասերում արձանագրվել են կուտակումներ քվեարկության սենյակում և տեղամասային կենտրոններին հարող տարածքում: Որոշ դեպքերում տեղամասային կենտրոններում ծառայություն իրականացնող ոստիկանները պատշաճ չեն արձագանքել իրավիճակներին, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահի հորդորից հետո:
- **Դիտորդներ**: Արձանագրվել են դիտորդների նկատմամբ ճնշման դեպքեր, որոնք հիմնականում գործադրվել են վստահված անձանց և հանձնաժողովի անդամների կողմից:
- **Ձայների հաշվարկ**: 25/12 տեղամասում քվեարկության ծրարները քվեատուփից հանել է ոչ թե հանձնաժողովի նախագահը, ինչպես սահմանված է օրենսգրքով, այլ քարտուղարը: Առաքելության՝ ԸԸՀ-ին տեղեկացնելուց հետո խնդիրը շտկվել է: Արդյունքների կեղծման դեպքեր չեն արձանագրվել:
- **Ուղիղ հեռարձակում**: 4 տեղամասում ուղիղ հեռարձակումը ժամանակավորապես ընդհատվել է և վերականգնվել առաքելության ահազանգից հետո: 25/17–25/20 տեղամասերը ներառված չէին հեռարձակման ցանկում:
- **Քարոզչություն լռության և քվեարկության օրերին**: Արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ քվեարկության և դրան նախորդող օրը թեկնածուների ֆեյսբուքյան էջերում տարածվել են քարոզչական բնույթի նյութեր:
- **Քարոզարշավ**: Ընտրություններին մասնակցող ուժերն իրենց հաղորդակցությունը կառուցել են ցուցակների առաջին համարների՝ որպես «համայնքի ղեկավարի թեկնածուների» շուրջ, ինչը չի արտացոլում ավագանու ընտրությունների համամասնական բնույթը և կարող է շփոթություն առաջացնել ընտրողների մոտ:

- **Վարչական ռեսուրս**: Համայնքի և դրա բնակավայրերի հետ առնչվող տեղեկատվական հարթակներում արձանագրվել է «Գործարար» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների ու դրանց թեկնածուների նախընտրական նյութերի տարածման 11 դեպք, որոնցից 7-ը՝ մինչև քարոզչության պաշտոնական մեկնարկը: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 50 թեկնածուից 29-ը և «Գործարար» կուսակցության 35 թեկնածուից 15-ն աշխատում են համայնքային կամ պետական կառույցներում:
- **Մատչելիություն**: 29 տեղամասից 19-ի մուտքն անմատչելի է հենաշարժական դժվարություններ ունեցող ընտրողների համար, 11 տեղամասի մուտքի դռան լայնությունը չի համապատասխանում ԿԸՀ սահմանած 90 սմ պահանջին, մատչելի սանհանգույց չկա ոչ մի տեղամասում:
- **Հայտարարագրեր**: 155 թեկնածուի հայտարարագրերից 14-ն ամբողջովին դատարկ են, 42 թեկնածու նշել է զրոյական եկամուտ, 16 հայտարարագրում արձանագրվել են սխալներ, անհամապատասխանություններ կամ եկամտի համեմատ խիստ անհամաչափ գումարներ: Միայն մեկ հայտարարագիր է լրացված էլեկտրոնային եղանակով:
- **Տեղամասային հանձնաժողովներ**: ԿԸՀ հրապարակած ցանկում 29 ՏԸՀ նախագահներից 18-ի և 29 քարտուղարներից 18-ի դիմաց նշված է «Քաղաքացիական պայմանագիր», իսկ 7 տեղամասում երկու պաշտոնն էլ վերապահված են նույն ուժին:
- **Արդյունքներ**: Թիվ 25 ԸԸՀ-ի վերջնական տվյալներով՝ քվեարկությանը մասնակցել է 13 299 ընտրող (68.72%): Առավել շատ ձայներ ստացել է «Գործարար» կուսակցությունը (5 505 ձայն): Ավագանու 21 մանդատը բաշխվել է «Գործարար» (9), «Քաղաքացիական պայմանագիր» (8) և «Ուժեղ Հայաստան» (4) կուսակցությունների միջև. «Հանրապետություն» կուսակցությունը չի հաղթահարել 4 տոկոսի շեմը: ԸԸՀ-ն արձանագրել է, որ տեղի չեն ունեցել Ընտրական օրենսգրքի խախտումներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա:

ԳԼՈՒԽ

02

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1. Առաքելության մասին

«Ազատ քվե» դիտորդական նախաձեռնությունը ստեղծվել է 2026 թվականին «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ի և «Երիտասարդները հանուն փոփոխության» ՔՀՁ ՀԿ-ի կողմից: Ստեփանավան համայնքի ընտրությունների երկարաժամկետ դիտարկումը՝ նախընտրական շրջանի ուսումնասիրությունները (թեկնածուների և կուսակցությունների հայտարարագրեր, ընտրական տեղամասերի մատչելիություն, տեղամասային ընտրական հանձնաժողովների ղեկավար կազմ, վարչական ռեսուրսի օգտագործման ռիսկեր), իրականացրել են «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ն և «Երիտասարդները հանուն փոփոխության» ՔՀՁ ՀԿ-ն: Քվեարկության օրվա կարճաժամկետ դիտարկումն իրականացվել է «Պրո Ինթերնեյշնլ»-ի ֆինանսական աջակցությամբ և «ՍԴ Պլատֆորմ Հայաստանի» հետ համագործակցությամբ: Նախաձեռնությունը պահպանում է քաղաքական անկողմնակալություն և չի աջակցում ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության կամ թեկնածուի: Սույն զեկույցի բովանդակության համար պատասխանատվություն են կրում «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ն և «Երիտասարդները հանուն փոփոխության» ՔՀՁ ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի «Պրո Ինթերնեյշնլ»-ի և «ՍԴ Պլատֆորմ Հայաստանի» տեսակետները:

Առաքելությունն իրականացվել է ԸՕ 30-րդ և 32-րդ հոդվածներով դիտորդական կազմակերպություններին և դիտորդներին վերապահված իրավունքների շրջանակում՝ առաջնորդվելով քաղաքացիական կազմակերպությունների կողմից անկուսակցական դիտարկման

միջազգային սկզբունքներով[1]՝ անկողմնակալություն, ճշգրտություն, մեթոդաբանության թափանցիկություն, փաստի և գնահատականի տարանջատում:

Նախընտրական շրջանում առաքելությունը հրապարակել է երեք թեմատիկ նյութ՝ հայտարարություն Ստեփանավան համայնքում վարչական ռեսուրսի հնարավոր օգտագործման դեպքերի վերաբերյալ (9 հոկտեմբերի)[2], հայտարարություն ընտրական տեղամասերի մատչելիության վերաբերյալ (22 հոկտեմբերի)[3] և զեկույց թեկնածուների ու կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերի վերաբերյալ (23 հոկտեմբերի)[4]: Նյութերն ամբողջությամբ հասանելի են «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ի կայքում (weyouth.am): Քվեարկության օրը առաքելությունը սոցիալական ցանցերում պարբերաբար ներկայացրել է արձանագրված դեպքերը, գործել է թեժ գիծ (055 30 39 42): 2026 թվականի հոկտեմբերի 26-ին Վանաձորում կայացել է մամուլի ասուլիս՝ դիտարկման արդյունքների վերաբերյալ: Սույն զեկույցն ամփոփում է առաքելության աշխատանքը:

2.2. Մեթոդաբանություն

Նախընտրական շրջան (երկարաժամկետ դիտարկում): Առաքելությունն ուսումնասիրել է ԿԸՀ հրապարակած տվյալները՝ ընտրողների թիվը, տեղամասային կենտրոնների մատչելիության չափումները և ՏԸՀ նախագահների ու քարտուղարների նշանակումները[5], ինչպես նաև թեկնածուների և կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերը (ընդհանուր 487 էջ): Հայտարարագրերը համադրվել են ընտրական ցուցակների, ԿԿՀ հայտարարագրերի ռեգիստրի և լրատվամիջոցների հրապարակումների հետ: 2026 թվականի օգոստոսի 21-ից հոկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է նաև համայնքի և դրա բնակավայրերի հետ առնչվող տեղեկատվական հարթակների հրապարակումների մշտադիտարկում:

Քվեարկության օր (կարճաժամկետ դիտարկում): Քվեարկության օրը առաքելության 26 հավատարմագրված դիտորդ դիտարկել է տեղամասերի բացումը, քվեարկությունը և ձայների հաշվարկը համայնքի բոլոր 29 ընտրական տեղամասերում (տեղամասերի ցանկը՝ Հավելված 2-ում): Դիտորդները օրվա ընթացքում առաքելության մեթոդաբանությանը համապատասխան գրանցել են իրենց արձանագրումները և համակարգող կենտրոնին են ներկայացրել դեպքերի նկարագրություններ, լուսանկարներ, տեսանյութեր, ՏԸՀ գրանցամատյանների գրառումների և

[1]Declaration of Global Principles for Non-Partisan Election Observation and Monitoring by Citizen Organizations, GNDEM, 2012, https://gndem.org/declaration-of-global-principles/:

[2]«Ազատ քվե» դիտորդական առաքելության հայտարարությունը Ստեփանավան համայնքում վարչական ռեսուրսի հնարավոր օգտագործման դեպքերի վերաբերյալ, 9 հոկտեմբերի, 2026 թ., https://weyouth.am/azat-qve-stepanavan/

[3]«Ազատ քվե» դիտորդական առաքելության հայտարարությունը Ստեփանավան համայնքի ընտրական տեղամասերի մատչելիության վերաբերյալ, 22 հոկտեմբերի, 2026 թ., https://weyouth.am/azat-qve -stepanavan/

[4]«Ազատ քվե» դիտորդական առաքելության զեկույցը Ստեփանավան համայնքի թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերի վերաբերյալ, 23 հոկտեմբերի, 2026 թ., https://weyouth.am/azat-qve-stepanavan-3/

[5]ԿԸՀ, ընտրողների թվի, տեղամասային կենտրոնների մատչելիության և տեղամասային ընտրական հանձնաժողովների ղեկավար կազմի վերաբերյալ հրապարակված տվյալներ (police25.10.2026_12-09-2026.pdf, 25.xlsx, 25_1.xlsx, nqt_25-09-2026.xlsx), elections.am:

արձանագրությունների քաղվածքների լուսանկարներ: Արձանագրված դեպքերի մեծ մասը գրանցվել է ՏԸՀ գրանցամատյաններում: Առաքելությունը հետևել է նաև ԿԸՀ ուղիղ հեռարձակմանը և սոցիալական ցանցերում տարածվող նյութերին:

Ձեկույցում առանձին դեպքերը ներկայացված են տեղամասի համարով և, հնարավորության դեպքում, ժամով: «Մի շարք տեղամասեր» նշումով արձանագրումները ընդհանուր դիտարկումներ են, որոնք արձանագրվել են տարբեր տեղամասերում: Ըստ տեղամասերի ամփոփումը ներկայացված է Հավելված 1-ում:

Իրավական չափանիշ: Արձանագրումները համադրվել են ՀՀ ընտրական օրենսգրքի գործող խմբագրության հետ[6]: Յուրաքանչյուր դեպքի համար նշված են համապատասխան նորմերը և տրված է իրավական գնահատական՝ առանձնացնելով այն դեպքերը, որոնցում իրավախախտման առկայությունը հաստատելու համար անհրաժեշտ են լրացուցիչ հանգամանքների պարզում կամ իրավասու մարմնի ուսումնասիրություն: Ձեկույցում ներկայացված գնահատականները չեն կարող դիտվել որպես իրավախախտման վերաբերյալ իրավասու մարմնի եզրահանգում:

2.3. Դիտարկման սահմանափակումները

- Դիտարկման արդյունքները որակական բնույթ ունեն և ներկայացուցչական սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ չեն:
- Մի շարք դեպքերի վերջնական իրավական որակումը պահանջում է լրացուցիչ հանգամանքների պարզում, որը դուրս է դիտորդական առաքելության լիազորություններից և իրավասու մարմինների գործառույթ է:
- Վստահված անձանց, ոստիկանության, թեկնածուների ներկայության, ուղղորդման և դիտորդների նկատմամբ ճնշման վերաբերյալ արձանագրումների մի մասը ներկայացված է ընդհանուր ձևակերպմամբ՝ առանց բոլոր դեպքերի տեղամասային բաշխման:
- Առաքելությունը չի դիտարկել ԸԸՀ-ի աշխատանքը քվեարկության օրվանից հետո, ինչպես նաև չի ուսումնասիրել դիմումների և բողոքների քննությունը: ԸԸՀ-ում արդյունքների ամփոփման վերաբերյալ տեղեկությունները (բաժին 6.3) ներկայացված են ԸԸՀ-ի հրապարակված որոշումների հիման վրա:

[6] ՀՀ ընտրական օրենսգիրք, գործող խմբագրություն, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, https://www.arlis.am/hy/acts/230464 (ստուգված է 2026 թ. հոկտեմբերի 28-ին):

ԳԼՈՒԽ

03

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

3.1. Համատեքստ

2026 թվականի հոկտեմբերի 25-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվեցին 21 համայնքում, որտեղ կազմավորված էր 520 ընտրական տեղամաս և հաշվառված էր 488 334 ընտրող: Ստեփանավան խոշորացված համայնքի 29 տեղամասից 10-ը (25/1–25/10) գտնվում են Ստեփանավան բնակավայրում, 19-ը (25/11–25/29)՝ համայնքի մյուս 19 բնակավայրերում: ԿԸՀ կայքում Լոռի Բերդ և Գյուլագարակ համայնքները նշված են 2022–2026 թվականների ժամանակահատվածով, և դրանց բնակավայրերում քվեարկությունն անցկացվել է Ստեփանավան համայնքի ավագանու ընտրությունների շրջանակում:

Ընտրություններին մասնակցում էին «Գործարար», «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր» և «Ուժեղ Հայաստան» կուսակցությունները: «Գործարար» կուսակցության ընտրական ցուցակը գլխավորում էր Ստեփանավանի գործող համայնքապետ Արմեն Գրիգորյանը[7]:

3.2. Իրավական շրջանակ

Համայնքի ավագանու ընտրություններն անցկացվում են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով: Քվեարկության հիմնական կանոններն են.

- քվեարկությունն անցկացվում է ժամը 08:00-ից մինչև 20:00-ն, իսկ 20:00-ին քվեարկության սենյակում գտնվող, բայց դեռևս չքվեարկած ընտրողները քվեարկելու իրավունք ունեն (ԸՕ 56(1), 68(1)).
- քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին, ՏԸՀ-ն նիստում վիճակահանությամբ բաշխում է հանձնաժողովի անդամների գործառույթները, որից հետո նախագահը բացում է չհրկիզվող պահարանը և ստուգում քվեատուփի դատարկ լինելը (ԸՕ 64(1), 64(2)).
- ընտրողն ընտրում է կուսակցություններից մեկին՝ տվյալ կուսակցության քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելով, իսկ չօգտագործված քվեաթերթիկները գցվում են քվեարկության խցիկում տեղադրված առանձին տուփի մեջ (ԸՕ 67(3)).
- ինքնասոսնձվող դրոշմանիշը ենթակա է հատուկ հաշվառման, դրա տպագրումն ապահովում է ԿԸՀ-ն, և այն քվեաթերթիկին փակցվում է քվեարկության ծրարի կտրվածքի միջով (ԸՕ 59(3), 67(7)).
- ավագանու մանդատները բաշխվում են այն կուսակցությունների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների և անճշտությունների թվի գումարի առնվազն 4 տոկոսը, իսկ ԸԸՀ-ն ընտրությունների արդյունքներն ամփոփում է քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը (ԸՕ 141(2), 141(3)).
- դիտորդներն իրավունք ունեն ներկա գտնվելու քվեարկության սենյակում և ամփոփման նիստին, լուսանկարելու և տեսանկարահանելու՝ առանց խախտելու քվեարկության

[7] «Ստեփանավանում ամենաշատ մանդատները կստանա «Գործարար» կուսակցությունը», Panorama.am, 26.10.2026:

գաղտնիությունը, և պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի ՏԸՀ գրանցամատյանում (ԸՕ 8(11), 32(1), 67(14)):

Ձեկույցում վկայակոչված նորմերի ամբողջական ցանկը ներկայացված է Հավելված 3-ում:

3.3. Ընտրական հանձնաժողովներ

ՏԸՀ նախագահների և քարտուղարների վերաբերյալ ԿԸՀ հրապարակած ցանկում Ստեփանավան համայնքի 29 նախագահներից 18-ի դիմաց նշված է «Քաղաքացիական պայմանագիր», 8-ի դիմաց՝ «Ուժեղ Հայաստան», 3-ի դիմաց՝ «Հայաստան»: Քարտուղարների պաշտոնները բաշխված են նույն համամասնությամբ: Համապետական մակարդակում (1 040 պաշտոն) բաշխումը կազմում է համապատասխանաբար 60.9%, 27.7% և 11.4%, ինչը համընկնում է Ազգային ժողովում այդ ուժերի մանդատների հարաբերակցությանը (105 մանդատից 64, 29 և 12)[8]:

Ստեփանավանի 7 տեղամասում (25/2, 25/4, 25/9, 25/13, 25/16, 25/22, 25/29) ՏԸՀ նախագահի և քարտուղարի երկու պաշտոնի դիմաց էլ նշված է «Քաղաքացիական պայմանագիր»: Համապետական մակարդակում նման տեղամասերի թիվը 113 է (520-ից): Մյուս երկու ուժերից որևէ մեկին որևէ տեղամասում երկու պաշտոնն էլ վերապահված չեն:

[8]ԿԸՀ, ընտրողների թվի, տեղամասային կենտրոնների մատչելիության և տեղամասային ընտրական հանձնաժողովների ղեկավար կազմի վերաբերյալ հրապարակված տվյալներ (police25.10.2026_12-09-2026.pdf, 25.xlsx, 25_1.xlsx, nqt_25-09-2026.xlsx), elections.am:

ԳԼՈՒԽ

04

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ

4.1. Ընտրական տեղամասերի մատչելիություն

Առաքելությունն ուսումնասիրել է ԿԸՀ հրապարակած՝ տեղամասային կենտրոնների մատչելիության մանրամասն չափումները և 2026 թվականի հոկտեմբերի 22-ին հրապարակել առանձին հայտարարություն[9]: ԸՕ 17(5) մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են տեղամասային կենտրոններում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ և տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովելու համար: ԿԸՀ 2022 թվականի մարտի 24-ի թիվ 17-Ն որոշմամբ[10] սահմանված են, մասնավորապես, քվեարկության սենյակի առաջին հարկում գտնվելու, առնվազն 90 սմ լայնությամբ դռան և հարթ շեմքի պահանջներ:

Հիմնական արձանագրումները.

- 29 տեղամասից 9-ի մուտքը լիովին մատչելի է, 1-ինը՝ մասամբ (25/17), 19-ինը՝ անմատչելի.
- աստիճաններով մուտք ունեցող 21 շենքից թեքահարթակ կա 11-ում, որոնցից 2-ի թեքությունը մատչելի չէ (25/23, 25/28), 6 շենքում թեքահարթակի տեղադրումը հնարավոր չէ (25/2, 25/6, 25/13, 25/18, 25/27, 25/29), բազրիք կա 2 շենքում.
- քվեարկության սենյակը երկրորդ հարկում է 3 տեղամասում (25/2, 25/23, 25/27).
- 11 տեղամասում մուտքի դռան լայնությունը 90 սմ-ից պակաս է, որից 8-ում՝ 80 սմ-ից պակաս (ամենանեղը՝ 25/19 Կողես, 50 սմ).
- ավտոկայանատեղի չունի ոչ մի տեղամաս, Բրայլյան գրատառով ցուցանակ չկա ոչ մի տեղամասում, 26 տեղամասում առկա սանհանգույցներից ոչ մեկը մատչելի չէ:

Արդյունքում հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող կամ տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար քվեարկելու հավասար պայմաններ ապահովված չեն համայնքի տեղամասերի մեծ մասում:

4.2. Թեկնածուների և կուսակցությունների հայտարարագրեր

ԸՕ 8(5) մասի համաձայն՝ թեկնածուները և ընտրություններին մասնակցող կուսակցությունները ներկայացնում են գույքի և եկամուտների հայտարարագրեր, իսկ 8(6) մասի համաձայն՝ հայտարարագրերը ներկայացվում են էլեկտրոնային եղանակով և տեղադրվում ԿԸՀ համացանցային կայքում՝ բաց տվյալների ձևաչափով: Առաքելությունն ուսումնասիրել է 155 թեկնածուի և 4 կուսակցության հայտարարագրերը և 2026 թվականի հոկտեմբերի 23-ին հրապարակել առանձին զեկույց[11]:

[9] «Ազատ քվե» դիտորդական առաքելության հայտարարությունը Ստեփանավան համայնքի ընտրական տեղամասերի մատչելիության վերաբերյալ, 22 հոկտեմբերի, 2026 թ., https://weyouth.am/azat-qve_-stepanavan/

[10] ԿԸՀ 2022 թվականի մարտի 24-ի թիվ 17-Ն որոշում:

[11] «Ազատ քվե» դիտորդական առաքելության զեկույցը Ստեփանավան համայնքի թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերի վերաբերյալ, 23 հոկտեմբերի, 2026 թ.,

Հիմնական արձանագրումները.

- 13 թեկնածու հայտարարագրել է ավելի քան 10 մլն դրամի դրամական միջոցներ՝ միայն դրամով, ևս 17-ը՝ նաև արտարժույթով միջոցներ. մի շարք դեպքերում դրամական միջոցները մի քանի անգամ գերազանցում են հայտարարագրված տարեկան եկամուտը.
- 14 թեկնածու ներկայացրել է ամբողջովին դատարկ հայտարարագիր, իսկ ընդհանուր առմամբ 42 թեկնածու նշել է զրոյական եկամուտ.
- 16 հայտարարագրում արձանագրվել են ակնհայտ սխալներ կամ բացթողումներ, այլ պաշտոնական աղբյուրների հետ անհամապատասխանություններ կամ եկամտի համեմատությամբ խիստ անհամաչափ գումարներ.
- «Քաղաքացիական պայմանագիր» և «Ուժեղ Հայաստան» կուսակցությունները հայտարարագրել են համապատասխանաբար շուրջ 1.53 և 1.45 մլրդ դրամի նվիրատվություններ՝ առանց նվիրատուների անունների, իսկ 35 թեկնածու առաջադրած «Գործարար» կուսակցությունը ներկայացրել է զրոյական ցուցանիշներով հայտարարագիր.
- 155 հայտարարագրից միայն մեկն է լրացված էլեկտրոնային եղանակով, մնացածը ձեռագիր լրացված և սկանավորված փաստաթղթեր են, որոնք հնարավոր չէ մշակել մեքենայական եղանակով:

Օրենսգիրքը չի նախատեսում թեկնածուների հայտարարագրված տվյալների համապարփակ ստուգման հստակ մեխանիզմ: Արդյունքում ընտրողը թեկնածուների ֆինանսական վիճակի մասին ստանում է միայն մասնակի պատկեր:

4.3. Վարչական ռեսուրսի օգտագործման ռիսկեր

Համայնքային տեղեկատվական հարթակներ: 2026 թվականի օգոստոսի 21-ից հոկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում առաքելությունն իրականացրել է համայնքի և դրա բնակավայրերի հետ առնչվող տեղեկատվական հարթակների հրապարակումների մշտադիտարկում և հոկտեմբերի 9-ին հրապարակել առանձին հայտարարություն[12]: «Դիմակայուն Ստեփանավան», «Վարդաբլուրի Գյուղապետարան» և «Գարգառի տեղեկատվական անկյուն» էջերում արձանագրվել է 11 դեպք, երբ տարածվել են ընտրություններին մասնակցող երկու քաղաքական ուժերի՝ «Գործարար» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների ու դրանց թեկնածուների նախընտրական բնույթի նյութեր, այդ թվում՝ քարոզչական պաստառներ, գրառումներ, տեսանյութ և քվեաթերթիկի համարներ: Արձանագրված դեպքերից 7-ը տեղի է ունեցել մինչև նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկը (սեպտեմբերի 30), իսկ 4-ը՝ քարոզչության ընթացքում: Առաքելությունն այս դեպքերը գնահատում է որպես վարչական ռեսուրսի հնարավոր օգտագործման ռիսկ պարունակող դեպքեր, որոնք կարող են ազդել ընտրություններին մասնակցող սուբյեկտների համար հավասար մրցակցային պայմանների ապահովման

https://weyouth.am/azat-qve-stepanavan-3/

[12]«Ազատ քվե» դիտորդական առաքելության հայտարարությունը Ստեփանավան համայնքում վարչական ռեսուրսի հնարավոր օգտագործման դեպքերի վերաբերյալ, 9 հոկտեմբերի, 2026 թ., https://weyouth.am/azat-qve-stepanavan/

վրա: Վերջնական իրավական գնահատականը վերապահվում է իրավասու ընտրական և այլ համապատասխան մարմիններին:

Հանրային հատվածում աշխատող թեկնածուներ: Հայտարարագրերի և ընտրական ցուցակների համադրմամբ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 50 թեկնածուից 29-ը և «Գործարար» կուսակցության 35 թեկնածուից 15-ն աշխատում են համայնքային կամ պետական կառույցներում, այդ թվում՝ համայնքների ղեկավար կազմերում և հանրային հիմնարկների ղեկավար պաշտոններում: «Գործարար» կուսակցության ցուցակը գլխավորում էր գործող համայնքապետը: Հանրային պաշտոն զբաղեցնող թեկնածուների մեծ թիվն ինքնին խախտում չէ, սակայն ստեղծում է վարչական ռեսուրսի օգտագործման և շահերի բախման ռիսկեր, որոնք պահանջում են հատուկ ուշադրություն ինչպես նախընտրական շրջանում, այնպես էլ քվեարկության օրը (տե՛ս բաժին 5.2, 25/24 տեղամասի դեպքը):

4.4. Լրատվամիջոցներում հրապարակված այլ տեղեկություններ

Hetq.am-ի 2026 թվականի հոկտեմբերի 21-ի հրապարակման համաձայն՝ այդ օրը Ստեփանավան համայնքում Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում կատարվել են խուզարկություններ և այլ քննչական գործողություններ, ձերբակալվել է 14 անձ: Հակակոռուպցիոն կոմիտեն այլ մանրամասներ չի հայտնել[13]: Առաքելությունն այս դեպքերը չի դիտարկել և դրանց վերաբերյալ գնահատական չի տալիս:

4.5. Քարոզարշավի շեշտադրումները և համայնքի ղեկավարի ընտրության կարգը

Քարոզարշավի ընթացքում ընտրություններին մասնակցող ուժերն իրենց հաղորդակցությունը հիմնականում կառուցել են ընտրական ցուցակների առաջին համարների շուրջ՝ նրանց ներկայացնելով որպես «համայնքի ղեկավարի թեկնածու»: Օրինակ՝ տեղական լրատվամիջոցի տեսանյութում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակի առաջին համարը ներկայացված է որպես «Ստեփանավան համայնքի ղեկավարի թեկնածու»:

Մինչդեռ 2026 թվականի հոկտեմբերի 25-ին ընտրողները քվեարկել են համայնքի ավագանու ընտրություններում՝ կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին: ԸՕ 142.1(1) մասի համաձայն՝ համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանի ունեցող համայնքում համայնքի ղեկավարն ընտրվում է ավագանու կողմից՝ անուղղակի ընտրակարգով: Ցուցակի առաջին համարն օրենքի ուժով համայնքի ղեկավար է համարվում միայն այն դեպքում, երբ կուսակցությունը ստանում է ավագանու տեղերի 50 տոկոսից ավելին (ԸՕ 142.2(2)): Հակառակ դեպքում համայնքի ղեկավարն ընտրվում է նորընտիր ավագանու առաջին նիստում՝ բաց քվեարկությամբ, իսկ ավագանու խմբակցությունները կարող են այդ պաշտոնում առաջադրել իրենց ցուցակի առաջին համարին կամ, նրա հրաժարվելու դեպքում, ցուցակի հաջորդ թեկնածուին (ԸՕ 142.2(3), 142.2(4)):

[13] «Ստեփանավանում 14 անձ է ձերբակալվել», Hetq.am, 21.10.2026, https://hetq.am/hy/article/184858:

Լրատվամիջոցներում հրապարակված մանդատների բաշխմամբ՝ Ստեփանավանում որևէ կուսակցություն չի ստանում ավագանու տեղերի 50 տոկոսից ավելին (տե՛ս բաժին 6.2), ուստի համայնքի ղեկավարն ընտրվելու է ավագանու կողմից: Քարոզարշավը որպես համայնքի ղեկավարի ուղղակի ընտրություն ներկայացնելը չի արտացոլում ավագանու ընտրությունների համամասնական բնույթը և համայնքի ղեկավարի անուղղակի ընտրության կարգը, ինչը կարող է շփոթություն առաջացնել ընտրողների մոտ՝ քվեարկության առարկայի և դրա հետևանքների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ

05

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Ստորև ներկայացված են քվեարկության օրը առաքելության արձանագրած խնդիրները՝ խմբավորված ըստ թեմաների: Յուրաքանչյուր դեպքի համար նշված են տեղամասը, ՀՀ ընտրական օրենսգրքի համապատասխան դրույթները և առաքելության իրավական գնահատականը:

5.1. Տեղամասերի բացում

ԸՕ 64(1) մասի համաձայն՝ քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին, ՏԸՀ-ն նիստում վիճակահանությամբ բաշխում է անդամների գործառույթները, իսկ 65(1) մասի համաձայն՝ ժամը 08:00-ին նախագահը հայտարարում է քվեարկության սկիզբը: Դիտորդների հաղորդումներով՝ տեղամասերի մեծ մասում նիստը և քվեարկությունը սկսվել են սահմանված ժամին: Բացման փուլում դիտորդների մուտքը տեղամասեր չի խոչընդոտվել, կողմնակի անձանց ներկայություն, քարոզչական նյութեր, քվեատուփին ներկայացվող պահանջների խախտում կամ քվեարկության գաղտնիությունը խախտող կահավորանք չեն արձանագրվել:

- **25/16** և **25/27**. ՏԸՀ նիստը սկսվել է համապատասխանաբար 07:14-ին և 07:20-ին: Այս ուշացումները քվեարկության մեկնարկի վրա չեն ազդել և ավելի շուտ վկայում են հանձնաժողովի աշխատանքի կազմակերպման խնդրի մասին:

5.2. Միջամտություն հանձնաժողովի աշխատանքին և կողմնակի անձանց ներկայություն

ԸՕ 8(11) մասով սահմանված է քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: 46(8) մասի համաձայն՝ ՏԸՀ նախագահն արգելում է այդ իրավունքը չունեցող, ինչպես նաև վերնազգեստի վրա առանց համապատասխան վկայականի անձանց ներկայությունը, իսկ 67(12) մասի համաձայն՝ քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ պետք է դուրս գա քվեարկության սենյակից:

25/24 (Գյուլագարակ): Գյուլագարակ համայնքի ղեկավար Խաչիկ Վարդանյանը 09:30–17:20 ընկած ժամանակահատվածում բազմիցս մտել է տեղամասային կենտրոն և քվեարկության սենյակ, այդ թվում՝ հիմնականում առանց վկայականի, և փորձել միջամտել հանձնաժողովի աշխատանքին: Նրան նախապես զգուշացում է տրվել, սակայն նա շարունակել է մնալ տարածքում, և այդ հանգամանքն արձանագրվել է գրանցամատյանում: Քվեարկելուց հետո նա քվեարկության սենյակից դուրս է եկել միայն նախագահի հորդորով: Դեպքն արձանագրված է գրանցամատյանում, առկա են տեսանյութեր:

Իրավական գնահատական: Արձանագրված գործողություններից յուրաքանչյուրն ունի առանձին իրավական հիմք.

- **քվեարկության սենյակում ներկայությունը՝ առանց վկայականի և ներկա գտնվելու իրավունքի**. ԸՕ 8(11) մասով սահմանված անձանց շրջանակում համայնքի ղեկավարը ներառված չէ, իսկ 46(8) մասի համաձայն՝ ՏԸՀ նախագահն արգելում է քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող, ինչպես նաև առանց համապատասխան վկայականի անձանց ներկայությունը: Որպես

ընտրող՝ նա քվեարկության սենյակում կարող էր գտնվել միայն քվեարկելու համար.

- **քվեարկելուց հետո քվեարկության սենյակում մնալը**. ԸՕ 67(12) մասի համաձայն՝ քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ պետք է դուրս գա քվեարկության սենյակից.
- **տեղամասային կենտրոն կրկնակի մուտքը զգուշացումից հետո**. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.15-րդ հոդվածի համաձայն՝ եթե անձը տեղամասային կենտրոն չմտնելու կամ տեղամասային կենտրոնը լքելու բանավոր պահանջը ներկայացնելուց հետո պարբերաբար մտել և գտնվել է տեղամասային կենտրոնում, նրա նկատմամբ սահմանվում է տուգանք՝ 50 000 դրամի չափով: Քանի որ զգուշացումը տրվել և արձանագրվել է գրանցամատյանում, այս հիմքը կիրառելի է.
- **հանձնաժողովի աշխատանքին միջամտելու փորձերը**. ընտրական հանձնաժողովի աշխատանքը խոչընդոտելու համար պատասխանատվություն է նախատեսված Քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածով: Այս հիմքի կիրառելիությունը գնահատելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք միջամտության փորձերը հանգեցրել են հանձնաժողովի աշխատանքի փաստացի խոչընդոտման:

25/9: Քաղաքացին քվեարկելուց հետո առնվազն 15–20 րոպե մնացել է տեղամասային կենտրոնում, այդ ընթացքում զանգեր է կատարել, դուրս ու ներս է արել: Նա հրաժարվել է ներկայանալ և տեղամասային կենտրոնը լքել է դիտորդի՝ նախագահին դիմելուց հետո: Ոստիկանությունը նրա ինքնությունը պարզելու քայլեր չի ձեռնարկել:

Իրավական գնահատական: Միայն տեղամասային կենտրոնում որոշ ժամանակ մնալն ինքնին իրավախախտում չէ: Եթե անձը տեղամասային կենտրոնում գտնվելու իրավունք չի ունեցել և մնացել է այն լքելու բանավոր պահանջից հետո, կարող է կիրառելի լինել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.15-րդ հոդվածը: Անհրաժեշտ է պարզել՝ անձը մնացել է բանավոր պահանջից հետո, թե ոչ:

25/19 (Կողես): Դիտորդների հաղորդմամբ՝ այս տեղամասում ձայների հաշվարկի ընթացքում ներկա են եղել կողմնակի անձինք: ԸՕ 68(2) մասի համաձայն՝ ամփոփման նիստին կարող են ներկա գտնվել ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք և թեկնածուն:

Վստահված անձինք (մի շարք տեղամասեր): ԸՕ 34(2) մասի համաձայն՝ վստահված անձինք իրավունք չունեն միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին, հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ և միջամտելու քվեարկության ընթացքին: 34(3) մասի համաձայն՝ քվեարկության սենյակում կարող է ներկա գտնվել ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկ վստահված անձ, իսկ վստահված անձինք պարտավոր են գրանցվել ՏԸՀ գրանցամատյանում: Դիտորդները հաղորդել են, որ մի շարք տեղամասերում վստահված անձինք պարբերաբար փորձել են միջամտել ընտրական գործընթացին: Մասնավորապես՝ **25/2** տեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձը քվեարկության ժամերին հաշվել է քվեարկության կտրոնները: Որոշ

տեղամասերում միաժամանակ ներկա են եղել միևնույն կուսակցության սահմանվածից ավելի վստահված անձինք, ընդ որում՝ հանձնաժողովները դրա նկատմամբ վերահսկողություն չեն իրականացրել:

Առաքելության դիտորդների արձանագրումներից բացի, 25/17 (Ցաղդան) տեղամասի գրանցամատյանի՝ լրատվամիջոցում հրապարակված լուսանկարում[14] «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության երեք վստահված անձի գրանցման գրառումները (07:40, 07:54 և 08:10) չունեն տեղամասից դուրս գալու ժամ: Նույն պատկերն է «Ուժեղ Հայաստան» (07:20) և «Գործարար» (09:03) կուսակցությունների մեկական վստահված անձի դեպքում: Գրառումներից հետևում է, որ կամ միևնույն կուսակցության մի քանի վստահված անձ միաժամանակ ներկա է եղել քվեարկության սենյակում, կամ նրանց դուրս գալու ժամը չի գրառվել գրանցամատյանում:

Իրավական գնահատական: Վստահված անձի օրինական դիտարկումը, հարցը կամ արձագանքը չպետք է նույնացնել իրավախախտման հետ: ԸՕ 34(2) մասի խախտման առկայությունը գնահատելու համար անհրաժեշտ է պարզել՝ եղել է արդյոք հանձնաժողովի աշխատանքի իրական խոչընդոտում: Քվեարկության կտրոնների հաշվարկը ՏԸՀ-ի գործառույթ է (ԸՕ 67(8)), ուստի 25/2 տեղամասում վստահված անձի կողմից կտրոնները հաշվելը կարող է դիտվել որպես հանձնաժողովի աշխատանքին միջամտություն (ԸՕ 34(2)): Միևնույն կուսակցության մեկից ավելի վստահված անձի միաժամանակյա ներկայությունը քվեարկության սենյակում չի համապատասխանում ԸՕ 34(3) մասի պահանջին, իսկ դրա կանխումը ՏԸՀ նախագահի պարտականությունն է (ԸՕ 46(8), 61(3)):

Թեկնածուների ներկայություն (մի շարք տեղամասեր): ԸՕ 67(13) մասի համաձայն՝ քվեարկության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուին արգելվում է գտնվել տեղամասային կենտրոնում կամ դրան հարող՝ մինչև 50 մետր շառավղով տարածքում, բացառությամբ քվեարկությանը մասնակցելու դեպքի: Դիտորդները հաղորդել են տեղամասային կենտրոններում թեկնածուների ներկայության դեպքերի մասին:

Ճնշում դիտորդների նկատմամբ: ԸՕ 32-րդ հոդվածով ամրագրված են դիտորդի իրավունքները և գործունեության երաշխիքները: Առաքելությունն արձանագրել է դիտորդների նկատմամբ ճնշման դեպքեր, այդ թվում՝ 25/4 և 25/24 տեղամասերում: Դիտորդների հաղորդմամբ՝ ճնշումը հիմնականում գործադրել են վստահված անձինք և հանձնաժողովի անդամները, որոնք, մասնավորապես, գնահատականներ են տվել դիտորդների աշխատանքին: **25/6** տեղամասի դիտորդը հաղորդել է նաև, որ հանձնաժողովը հրաժարվել է գրանցամատյանում արձանագրել իր գնահատականը, մինչդեռ ԸՕ 67(14) մասի համաձայն՝ դիտորդն իրավունք ունի պահանջելու, որ օրենսգրքով նախատեսված կարգի խախտման վերաբերյալ իր գնահատականն արձանագրվի գրանցամատյանում:

[14]Infocom լրատվամիջոցի Telegram ալիքում հրապարակված՝ 25/17 տեղամասի ՏԸՀ գրանցամատյանի «Վստահված անձանց տվյալներ» էջի լուսանկար (գրառումները՝ 24.10.2026 և 25.10.2026):

5.3. Քվեարկության գաղտնիություն

ԸՕ 6(1) մասի համաձայն՝ ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն, իսկ 67(6) մասի համաձայն՝ արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:

25/4: Ընտրողը նկարահանել է քվեարկության խցիկում: Դեպքն արձանագրված է գրանցամատյանում, առկա է տեսանյութ:

Իրավական գնահատական: Քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանված շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը՝ քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկությունը հրապարակելու միջոցով խախտելու համար: Անհրաժեշտ է պարզել՝ ինչ է նկարահանվել, և արդյոք բացահայտվել է քվեարկության գաղտնիքը: Պետք է հաշվի առնել նաև, որ դեպքը կարող է կապված լինել ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելու կամ քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողի քվեաթերթիկը ստուգելու հետ, ինչը կարող է պարզվել միայն իրավասու մարմնի կողմից:

25/24, 14:26: Ընտրողն ընտրությունը կատարել է քվեարկության խցիկից դուրս: Դեպքն արձանագրված է գրանցամատյանում, առկա է տեսանյութ:

Իրավական գնահատական: Եթե ընտրողն ակնհայտորեն դուրս է եկել քվեարկության խցիկից և ցուցադրաբար տեղավորել քվեաթերթիկը ծրարում, առկա են ԿԸՀ դիմելու հիմքեր՝ իրավական գնահատման և պատասխանատու անձանց գործողությունների ուսումնասիրության պահանջով, իսկ հանգամանքները պարզելու դեպքում՝ նաև Քննչական կոմիտե հաղորդում ներկայացնելու հիմքեր:

25/4, 16:25: Տարեց ընտրողը քվեաթերթիկը լրացրել է քվեարկության խցիկից դուրս (բաց քվեարկություն): Առկա է տեսանյութ: *Իրավական գնահատական:* Դեպքը պայմանավորված է տարիքով պայմանավորված կողմնորոշման խնդրով և չի դիտարկվում որպես դիտավորություն:

25/1: Ընտրողներ քվեարկել են առանց քվեարկության խցիկ մտնելու: Տարեց ընտրողը դժվարացել է կողմնորոշվել քվեարկության կարգում, և օգնության համար հրավիրվել է մեկ այլ ընտրող: Առկա են լուսանկարներ և տեսանյութ: *Իրավական գնահատական:* Դեպքում իրավախախտման հատկանիշներ չեն դիտարկվում (ԸՕ 6, 67(9)):

Բաց քվեարկություն (մի շարք տեղամասեր): Ընտրողների ցածր իրազեկվածության և հանձնաժողովի անդամների ոչ բավարար պատրաստվածության հետևանքով ընտրողները հաճախ դուրս են եկել քվեարկության խցիկից՝ ընթացակարգը ճշտելու համար: Արձանագրվել են բաց քվեարկության բազմաթիվ դեպքեր, այդ թվում՝ դրոշմանիշերի տպագրական թերությունների հետևանքով (տե՛ս բաժին 5.4): Գաղտնիության խախտման դեպք է արձանագրվել նաև 25/28 տեղամասում: Դիտորդները հաղորդել են նաև ընտրողներին ուղղորդելու դեպքերի մասին. ուղղորդումների վերաբերյալ ահազանգեր են հրապարակվել նաև լրատվամիջոցներում[15], և առաքելությունն այս հարցով դիմել է ԿԸՀ թեժ

[15] «Համատարած կուտակումներ և ուղղորդումներ են՝ տեսախցիկներն էլ պարբերաբար անջատում են. Մելոյան», Panorama.am, 25.10.2026:

գծին: *Գնահատական:* Այս խնդիրները համակարգային բնույթ ունեն և պահանջում են ընտրողների իրազեկման և հանձնաժողովների անդամների վերապատրաստման միջոցառումներ:

5.4. Քվեաթերթիկներ և ինքնասոսնձվող դրոշմանիշեր

ԸՕ 59(3) մասի համաձայն՝ ինքնասոսնձվող դրոշմանիշը պաշտպանիչ շերտերով տպարանային եղանակով պատրաստված դրոշմանիշ է, որի վրա նշված են ընտրության անվանման հապավումը, քվեարկության ամսաթիվը և ընտրական տեղամասի համարը, և որը ենթակա է հատուկ հաշվառման: 59(4) մասի համաձայն՝ դրոշմանիշերի տպագրումն ապահովում է ԿԸՀ-ն: ԸՕ 70(1) մասի համաձայն՝ սահմանված նմուշի քվեաթերթիկ է համարվում այն քվեաթերթիկը, որի վրա փակցված է տվյալ ընտրական տեղամասի ինքնասոսնձվող դրոշմանիշը:

Տպագրական թերություններ (25/2, 25/3, 25/4, 25/5, 25/6, 25/7, 25/16, 25/19, 25/24, 25/27, 25/28): Դրոշմանիշերի տպագրական թերություններ արձանագրվել են 11 տեղամասում, որոնք գտնվում են համայնքի տարբեր բնակավայրերում, ինչը վկայում է խնդրի համատարած բնույթի մասին: Թերի դրոշմանիշերի վրա տպագրված տվյալները (ընտրության անվանման հապավումը, քվեարկության ամսաթիվը և տեղամասի համարը) տեղաշարժված էին դրոշմանիշի եզրերի նկատմամբ և մասամբ դուրս էին գալիս դրանցից: Մի շարք տեղամասերում հանձնաժողովի անդամները դրոշմանիշերը փակցրել են սոսնձով, կրկնակի անգամ, դրոշմանիշի երկու կողմերից կամ այլ ոչ սովորական եղանակներով: Դիտորդների հաղորդմամբ՝ խնդիրը դանդաղեցրել է քվեարկության ընթացքը և հանգեցրել է կուտակումների, ինչպես նաև բաց քվեարկության դեպքերի:

Քվեարկության օրը «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչը ևս հրապարակայնորեն հայտարարել է դրոշմանիշերի ոչ պատշաճ որակի մասին և պահանջել, որ տպագրական թերությունը չհանգեցնի քվեաթերթիկների անվավերության[16]:

Իրավական գնահատական: Տպագրական թերությունն ինքնին պարտադիր չէ, որ իրավախախտում լինի: Անհրաժեշտ է պարզել՝ արդյոք այն խանգարել է ընտրական ընթացակարգին, դրոշմանիշի նույնականացմանը կամ քվեաթերթիկների վավերականությանը, և արդյոք եղել է մատակարարման կամ հանձնաժողովի աշխատանքի խախտում: Առաքելությունը նպատակահարմար է համարում դիմել ԿԸՀ՝ թերությունների բնույթի, տարածվածության, քվեարկության արդյունքների վրա հնարավոր ազդեցության և ձեռնարկված միջոցների պարզաբանման պահանջով:

25/24: Ժամը 08:46-ին դրոշմանիշ փակցված քվեարկության ծրարը մարվել է, որից հետո ընտրողին տրամադրվել է նոր ծրար: Ժամը 16:00-ի դրությամբ նույն տեղամասում դրոշմանիշ փակցված ծրարի մարում տեղի է ունեցել երկրորդ անգամ: Երկու դեպքն էլ արձանագրված են գրանցամատյանում:

Իրավական գնահատական: Անհրաժեշտ է ստուգել՝ ինչ հիմքով է ծրարը մարվել, արդյոք պահպանվել է ԸՕ 67(10) մասով սահմանված կարգը, և արդյոք նոր ծրարը տրամադրվել է օրինական ընթացակարգով: Երկու

[16] «Պահանջում ենք, որ տպագրական այս խոտանը չհանգեցնի քվեաթերթիկների անվավերության. Մելոյան», Panorama.am, 25.10.2026:

դեպքն ինքնին չի վկայում արդյունքների կեղծման մասին: Առաքելությունը նպատակահարմար է համարում դիմել ԿԸՀ՝ երկու դեպքերի վերաբերյալ արձանագրությունների և քվեարկության նյութերի ստուգման պահանջով: Դիտավորյալ կեղծման կամ քվեարկության արդյունքների վրա ազդելու տվյալներ հայտնաբերելու դեպքում պետք է հաղորդում ներկայացվի Քննչական կոմիտե:

25/6: Դրոշմանիշերը քվեաթերթիկներին փակցվել են սոսնձամատիտով (գրանցամատյանում արձանագրված է ժամը 08:30-ի սահմաններում): Ժամը 10:27-ին մեկ քվեաթերթիկին փակցվել է երկու դրոշմանիշ (գրանցամատյանում՝ 10:00-ի սահմաններում): Առկա են լուսանկարներ և տեսանյութ: Նույն տեղամասում դրոշմանիշը փակցնելու ընթացքում քվեարկության ծրարը գտնվել է ոչ թե ընտրողի ձեռքում, այլ սեղանի վրա, նոր դրոշմանիշեր վերցնելու համար հանձնաժողովի անդամները ստորագրել են, իսկ քվեարկության կտրոնները հավաքվել են քվեատուփի վրա:

Իրավական գնահատական: Ինքնասոսնձվող դրոշմանիշը սոսնձով փակցնելը խոսում է ավելի շուտ պատասխանատու անձի պատրաստվածության և տպագրական ընդհանուր խնդրի մասին: Երկրորդ դրոշմանիշը սխալմամբ փակցնելու դեպքում անհրաժեշտ է պարզել՝ արդյոք հանձնաժողովը քվեաթերթիկը համարել է վնասված և կիրառել ԸՕ 67(10) մասով նախատեսված ընթացակարգը, թե քվեաթերթիկը մնացել է քվեատուփում: ԸՕ 67(7) մասի համաձայն՝ անդամը դրոշմանիշը փակցնում է ծրարի կտրվածքի միջով՝ առանց ծրարն ընտրողից վերցնելու. այս շեղումն էական չէ, սակայն անհրաժեշտ է պարզել՝ արդյոք նախագահը նոր խմբաքանակ տրամադրելուց առաջ պատասխանատու անդամից վերցրել է քվեարկության կտրոնները (ԸՕ 67(8)): Կտրոնները քվեատուփի վրա հավաքելու վերաբերյալ օրենսգիրքը հատուկ պահանջ չի սահմանում, էական է, որ դրանք հերթափոխի ավարտին հանձնվեն նախագահին, հաշվվեն և թվերն արձանագրվեն գրանցամատյանում:

25/19, 14:23: Ինքնասոսնձվող դրոշմանիշերը փակցվել են սոսնձով (տեսանյութ): *Գնահատական:* Դեպքը տպագրական ընդհանուր խնդրի դրսևորում է:

Քվեաթերթիկների և ծրարների մարում (մի շարք տեղամասեր): Դիտորդները հաղորդել են սահմանված կարգի խախտմամբ քվեաթերթիկների և սահմանված նմուշի քվեարկության ծրարների մարման դեպքերի մասին (ԸՕ 67(10)):

5.5. Ընտրական փաստաթղթերի պահպանում և ընտրողների գրանցում

ԸՕ 61(2) մասի համաձայն՝ ինքնասոսնձվող դրոշմանիշերը և կնիքը պահվում են քվեարկության սենյակում գտնվող չհրկիզվող պահարանում, իսկ ընտրական փաստաթղթերի պահպանման կարգը սահմանում է ԿԸՀ-ն: 61(3) մասի համաձայն՝ նախագահը պարտավոր է ապահովել օրենսգրքի պահանջների կատարումը:

- **25/24**. չհրկիզվող պահարանը 30 և ավելի րոպե բաց է եղել (գրանցամատյանի գրառմամբ՝ 07:32–08:02): Դեպքն արձանագրված է գրանցամատյանում, առկա է տեսանյութ.

– **25/2**. չհրկիզվող պահարանը գտնվել է բաց վիճակում (լուսանկարներ):

Իրավական գնահատական: Երկու դեպքն էլ ԿԸՀ թիվ 11-Ն որոշմամբ սահմանված պահանջի խախտում են: Եթե օրենսդիրը պահանջել է, որ որոշակի առարկաներ պահպանվեն հենց չհրկիզվող պահարանում, ապա այդ պահանջի նպատակը դրանց անվտանգությունն ապահովելն է: Պահարանը բաց վիճակում թողնելը, երբ դրանում պահպանվող փաստաթղթերը չեն օգտագործվում, նվազեցնում է այդ պահպանության արդյունավետությունը: Չհրկիզվող պահարանը պարզապես պահեստային կահույք չէ, այլ ընտրական փաստաթղթերի պահպանության համար նորմատիվ ակտով նախատեսված հատուկ միջոց, իսկ պահպանության նպատակը ոչ միայն փաստաթղթերի ֆիզիկական առկայությունն է, այլև դրանց նկատմամբ չարտոնված միջամտության բացառումը: ԿԸՀ-ն առաքելության հեռախոսային հարցմանն ի պատասխան նշել է, որ պահարանը փակ պահելը ցանկալի է, բայց ոչ պարտադիր, սակայն այդ մոտեցումը չի կարող կասկածի տակ առնել իրավական ակտերի վերաբերելի դրույթների համադրված իմաստը: Առկա են հիմքեր դիմելու՝ հանձնաժողովի նախագահներին պատասխանատվության ենթարկելու պահանջով:

25/16 (Ագարակ): Դիտորդը հաղորդել է, որ ընտրողներից մեկի անվան դիմաց ընտրողների ցուցակում եղել է այլ անձի ստորագրություն, և լուսանկարել է գրանցամատյանի համապատասխան գրառումը: ԸՕ 66(8) մասի համաձայն՝ ընտրողն ինքն է ստորագրում ընտրողների ցուցակում՝ իր տվյալների դիմաց: *Գնահատական:* Այս արձանագրումը կարևոր է, սակայն ինքնին չի հաստատում այլ անձի փոխարեն քվեարկության փաստը: Դեպքի իրավական գնահատման համար անհրաժեշտ է պարզել՝ արդյոք տվյալ ընտրողը մասնակցել է քվեարկությանը, ով է ստորագրել նրա անվան դիմաց, արդյոք առկա է հանձնաժողովի սխալ կամ ստորագրության տեխնիկական շփոթություն, և արդյոք դեպքը ստուգվել է հանձնաժողովի կողմից: Առաքելությունը նպատակահարմար է համարում, որ դեպքն ուսումնասիրվի ԸԸՀ-ի կողմից:

5.6. Կարգ ու կանոն տեղամասերում և հարակից տարածքում

ԸՕ 65(5) մասի համաձայն՝ եթե քվեարկության սենյակում գտնվող ընտրողների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարվում է քվեարկության բնականոն ընթացքը, նախագահն իրավունք ունի սահմանափակելու միաժամանակ գտնվող ընտրողների թիվը, բայց ոչ պակաս, քան 15 ընտրող: 22(3) մասի համաձայն՝ արգելվում է տեղամասային կենտրոնին հարող 50 մետր շառավղով տարածքում խմբերով հավաքվելը:

– **25/5**, 13:30. կուտակում քվեարկության սենյակում: Դիտորդի դիմումից հետո նախագահը կարգավորել է իրավիճակը.
– **մի շարք տեղամասեր, այդ թվում՝ 25/6 և 25/24**. կուտակումներ քվեարկության սենյակում և տեղամասային կենտրոններին հարող տարածքում, որոնց պատճառներից մեկը, դիտորդների հաղորդմամբ, դրոշմանիշերի խնդիրն էր:

Իրավական գնահատական: Անհրաժեշտ է պատշաճ գնահատել, թե արդյոք քվեարկության սենյակում միաժամանակ գտնվել է 15-ից ավելի

ընտրող. նույնիսկ այդ դեպքում դա դեռ չի նշանակում քվեարկության բնականոն ընթացքի խաթարում:

Ոստիկանություն (25/9 և մի շարք այլ տեղամասեր): Տեղամասային կենտրոններում ծառայություն իրականացնող ոստիկանները որոշ դեպքերում պատշաճ չեն արձագանքել իրավիճակներին: Մասնավորապես՝ 25/9 տեղամասում ոստիկանությունը քայլեր չի ձեռնարկել քվեարկելուց հետո տեղամասում մնացած և ներկայանալուց հրաժարված անձի ինքնությունը պարզելու համար: Դիտորդները հաղորդել են նաև դեպքերի մասին, երբ ոստիկանության ծառայողները դժկամություն են դրսևորել միջամտելու՝ նույնիսկ հանձնաժողովի նախագահի հորդորից հետո:

Իրավական գնահատական: Ոստիկանությունը պարտավոր չէ ցանկացած դեպքում ինքնուրույն միջամտել քվեարկության սենյակում կատարվողին. ԸՕ 55(1) և 65(5) մասերի համաձայն՝ ոստիկանությունն աջակցում է հանձնաժողովին նախագահի պահանջով, ուստի նախագահը պետք է հրավիրի ոստիկանության ծառայողներին: Միևնույն ժամանակ նախագահի պահանջը չկատարելը չի համապատասխանում ԸՕ 55(1) մասով սահմանված պարտականությանը: Տեղամասային կենտրոնին հարող 50 մետր շառավղով տարածքում կարգի պահպանումը ոստիկանությունն ապահովում է անկախ հանձնաժողովի պահանջից (ԸՕ 22(3)):

5.7. Ուղիղ հեռարձակում

ԸՕ 8(11.1) մասի համաձայն՝ համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու ընտրությունների ժամանակ ԿԸՀ-ի ընտրած մասնագիտացված կազմակերպությունն իրականացնում է տեղամասերից քվեարկության և ամփոփման ընթացքի համացանցային հեռարձակում, իսկ հեռարձակվող տեղամասերի ցանկը սահմանվում է ԿԸՀ-ի և կազմակերպության միջև կնքված պայմանագրով:

- **25/16, 25/24, 25/26, 25/28**. ժամը 11:06–11:11-ին ուղիղ հեռարձակումը հասանելի չէր: Այն վերականգնվել է առաքելության՝ ԿԸՀ-ին հեռախոսով ահազանգելուց հետո (14:43-ի դրությամբ հասանելի էր).
- **25/17, 25/18, 25/19, 25/20**. տեղամասերը ներառված չէին ԿԸՀ ուղիղ հեռարձակման ցանկում:

Գնահատական: Հեռարձակման ժամանակավոր ընդհատումն ինքնին դեռևս չի վկայում ընտրական օրենսդրության խախտման մասին: Դեպքի գնահատման համար անհրաժեշտ է պարզել ընդհատման պատճառները, տևողությունը և հեռարձակման կազմակերպման պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Համայնքի բոլոր տեղամասերի ներառումը հեռարձակման ցանկում առվոկացիայի հարց է:

5.8. Քվեարկության ավարտ և ձայների հաշվարկ

ԸՕ 56(1) և 68(1) մասերի համաձայն՝ ժամը 20:00-ին քվեարկության սենյակում գտնվող, բայց դեռևս չքվեարկած ընտրողները քվեարկելու իրավունք ունեն: Դիտորդների հաղորդումներով՝ տեղամասերը փակվել են ժամը 20:00-ին:

Դիտորդների հաղորդումներով՝ ամփոփումն ավարտվել է 20:49-ից (25/19) մինչև 23:24 (25/28) ընկած ժամանակահատվածում: Միտումնավոր սխալ հաշվարկի, արդյունքների կեղծման, բռնության կամ ճնշման դեպքեր չեն արձանագրվել:

25/12 (Ուրասար): ԸՕ 68(3) մասի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում քվեարկության մեկ ծրար, ցուցադրում այն ներկաներին և, մարելու հիմքերի բացակայության դեպքում, ծրարից հանում է քվեաթերթիկը և ցուցադրում այն: 25/12 տեղամասում քվեարկության ծրարները քվեատուփից հանել է հանձնաժողովի քարտուղարը, իսկ նախագահը դրանք բացել և ցուցադրել է. դեպքը տեսանելի է ԿԸՀ ուղիղ հեռարձակման կադրերում: Առաքելությունը հեռախոսով տեղեկացրել է ԸԸՀ-ին, որից հետո խնդիրը շտկվել է: *Իրավական գնահատական:* Դեպքը վկայում է ավելի շուտ հանձնաժողովի անդամների պատրաստվածության խնդրի մասին:

Արձանագրությունների քաղվածքներ: ԸՕ 72(1) մասի համաձայն՝ առաջին անճշտությունը հաշվարկվում է ընտրողներից ստացված քվեարկության կտրոնների և չօգտագործված դրոշմանիշերի թվի գումարը հատկացված դրոշմանիշերի թվի հետ համադրելով: Դիտորդների ուղարկած քաղվածքների համադրմամբ՝

- **25/4**. հատկացված 1 000 դրոշմանիշից չօգտագործվել է 337-ը, իսկ քվեարկության կտրոնների և մասնակիցների թիվը 665 է. տարբերությունը կազմում է 2 (քվեատուփում հայտնաբերվել է 663 քվեարկության ծրար).
- **25/6**. հատկացված 1 500 դրոշմանիշից չօգտագործվել է 587-ը (օգտագործվել է 913-ը), իսկ քվեարկության կտրոնների, մասնակիցների և քվեաթերթիկների թիվը 912 է. տարբերությունը կազմում է 1:

ԸՕ 72(4) մասի համաձայն՝ անճշտությունների չափը հաշվարկում և արձանագրում է ընտրության արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողովը:

5.9. Քարոզչություն քվեարկության և դրան նախորդող օրը

ԸՕ 19(1) մասի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածն ավարտվում է քվեարկության օրվանից մեկ օր առաջ, իսկ «Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակմամբ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից, ինչպես նաև համացանցում գովազդի միջոցով արգելվում է»: ԸՕ 19(1.1) մասի համաձայն՝ նախընտրական քարոզչություն է համարվում ցանկացած գործողություն, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության օգտին:

Առաքելության դիտորդներն արձանագրել են բազմաթիվ դեպքեր, երբ քվեարկության և դրան նախորդող օրը թեկնածուների ֆեյսբուքյան

էջերում տարածվել են քարոզչական բնույթի նյութեր: Օրինակ՝ քվեարկության օրը

- «Ուժեղ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի թիվ 10 թեկնածուի էջում տարածվել են ցուցակի առաջին համարի տեսաուղերձը և կուսակցության՝ Ստեփանավանում անցկացրած երթի մասին տեղական լրատվամիջոցի տեսանյութը.
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի թիվ 13 թեկնածուի էջում տարածվել է տեղական լրատվամիջոցի տեսանյութը, որում ցուցակի առաջին համարը ներկայացված է որպես համայնքի ղեկավարի թեկնածու[17]:

Օրենսգիրքը քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունն արգելում է հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, զանգվածային լրատվության միջոցների և համացանցում գովազդի միջոցով, սակայն ուղղակիորեն չի կարգավորում թեկնածուների անձնական սոցիալական ցանցերի էջերում ոչ գովազդային հրապարակումները: Այդ պատճառով արձանագրված դեպքերի իրավական որակումը պահանջում է իրավասու մարմնի գնահատական: Միևնույն ժամանակ նման հրապարակումները չեն համապատասխանում քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչության սահմանափակման նպատակին՝ ընտրողին հնարավորություն տալ որոշում կայացնելու քարոզչական ազդեցությունից զերծ պայմաններում:

[17]ԿԸՀ, «ՏԻՄ համամասնական, Լոռի - Ստեփանավան, 25.10.2026», «Գրանցված թեկնածուներ», https://www.elections.am/Elections/LocalProportional (ստուգված է 2026 թ. հոկտեմբերի 28-ին):

ԳԼՈՒԽ

06

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

6.1. Մասնակցություն

Թիվ 25 ԸԸՀ-ի արձանագրության համաձայն՝ ընտրողների ցուցակներում ընդգրկված էր 19 353 ընտրող (հիմնական ցուցակներում՝ 19 324, լրացուցիչ ցուցակներում՝ 29), իսկ քվեարկությանը մասնակցել է 13 299 ընտրող, ինչը կազմում է ընտրողների 68.72%-ը[18]:

Քվեարկության օրը ԿԸՀ-ի հրապարակած օպերատիվ տվյալներով մասնակցության դինամիկան ներկայացված է Աղյուսակ 1-ում[19]: Այս տվյալների տոկոսները հաշվարկված են հիմնական ցուցակներում ընդգրկված 19 324 ընտրողի նկատմամբ:

Աղյուսակ 1. Մասնակցությունն ըստ ժամերի (ԿԸՀ օպերատիվ տվյալներ)

Ժամ	Մասնակիցներ	Տոկոս
11:00	2 524	13.06%
14:00	7 333	37.95%
17:00	11 277	58.36%
20:00	13 300	68.83%

6.2. Արդյունքներ

Թիվ 25 ԸԸՀ-ի արձանագրության համաձայն՝ անվավեր է ճանաչվել 48 քվեաթերթիկ, անճշտությունների թիվը կազմել է 5: Կուսակցությունների ստացած ձայները ներկայացված են Աղյուսակ 2-ում[20]: Տոկոսները հաշվարկված են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի (13 247) նկատմամբ:

Աղյուսակ 2. Կուսակցությունների ստացած ձայները և մանդատները

Կուսակցություն	Ձայներ	Տոկոս	Մանդատներ
«Գործարար» կուսակցություն	5 505	41.56%	9
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	4 681	35.34%	8
«Ուժեղ Հայաստան» կուսակցություն	2 609	19.70%	4
«Հանրապետություն» կուսակցություն	452	3.41%	0

«Հանրապետություն» կուսակցությունը չի հաղթահարել ԸՕ 141(3) մասով սահմանված 4 տոկոսի շեմը: Թիվ 25 ԸԸՀ-ի 2026 թվականի նոյեմբերի 1-ի N 35-Ա որոշմամբ՝ ավագանու 21 մանդատը բաշխվել է «Գործարար» (9), «Քաղաքացիական պայմանագիր» (8) և «Ուժեղ Հայաստան» (4)

[18] Թիվ 25 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, Ստեփանավան համայնքի ավագանու ընտրությունների քվեարկության արդյունքների մասին արձանագրություն, 01.11.2026, հրապարակված ԿԸՀ կայքում՝ https://www.elections.am/TEC (թիվ 25 ԸԸՀ, «Որոշումներ» բաժին):

[19] ԿԸՀ, «Մասնակցություն, 25.10.2026, Լոռի, Ստեփանավան», https://dashboards.elections.am/Elections/TEC/Participation/Index/28838:

[20] Թիվ 25 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, Ստեփանավան համայնքի ավագանու ընտրությունների քվեարկության արդյունքների մասին արձանագրություն, 01.11.2026, հրապարակված ԿԸՀ կայքում՝ https://www.elections.am/TEC (թիվ 25 ԸԸՀ, «Որոշումներ» բաժին):

կուսակցությունների միջև[21]: Որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

Քվեարկության օրվան հաջորդած նախնական տվյալների համեմատ՝ «Գործարար» կուսակցության ձայները նվազել են 1-ով (5 506-ից 5 505), իսկ անվավեր քվեաթերթիկների թիվն աճել է 1-ով (47-ից 48), ինչը համապատասխանում է 25/4 տեղամասում կատարված վերահաշվարկի արդյունքին (տե՛ս բաժին 6.3):

Դիտորդների հավաքագրած տեղամասային տվյալներով՝ Ստեփանավան բնակավայրի 25/1–25/8 տեղամասերում առավել շատ ձայներ ստացել է «Գործարար» կուսակցությունը, իսկ համայնքի մյուս բնակավայրերի տեղամասերի մեծ մասում՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը:

6.3. Արդյունքների ամփոփումը թիվ 25 ԸԸՀ-ում

Թիվ 25 ԸԸՀ-ն ընտրությունների արդյունքներն ամփոփել է 2026 թվականի նոյեմբերի 1-ին՝ ԸՕ 141(2) մասով սահմանված ժամկետում (N 34-Ա որոշում)[22]: Որոշման համաձայն՝

- վերահաշվարկի դիմումներ չեն ներկայացվել, և ԸԸՀ-ն իր նախաձեռնությամբ վերահաշվարկ չի իրականացրել.
- վիճակահանությամբ որոշված տեղամասերում կատարված վերահաշվարկի արդյունքում 25/15 և 25/28 տեղամասերում փոփոխություններ չեն արձանագրվել, իսկ 25/4 տեղամասում «Գործարար» կուսակցության օգտին քվեարկված մեկ քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր.
- ԸԸՀ-ն ստացել է երեք դիմում (որոնցից երկուսը՝ նույնաբովանդակ) և դրանց պատասխանել է գրավոր: Դրանցից մեկը՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության լիազորված անձանց կողմից հոկտեմբերի 30-ին ներկայացված դիմումը, վերաբերում էր ընտրողներին մոլորեցնելու, վարչական ռեսուրսի օգտագործման և այլ ենթադրյալ համակարգային խախտումների: ԸԸՀ-ն դիմումում բերված պնդումները գնահատել է որպես բավարար չափով չհիմնավորված.
- վարչական դատարան հայցեր չեն ներկայացվել:

Որոշման եզրափակիչ մասում ԸԸՀ-ն արձանագրել է, որ ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել Ընտրական օրենսգրքի խախտումներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա: Առաքելությունը նշում է, որ այս եզրակացությունը վերաբերում է խախտումների ազդեցությանն ընտրությունների արդյունքների վրա և չի հերքում սույն զեկույցում արձանագրված ընթացակարգային խախտումների առկայությունը, որոնք պահանջում են համապատասխան մարմինների ուշադրությունը (տե՛ս բաժին 8):

[21]Թիվ 25 ԸԸՀ-ի 2026 թ. նոյեմբերի 1-ի «Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2026 թվականի հոկտեմբերի 25-ի ավագանու ընտրությունների քվեարկության արդյունքներով Ստեփանավան համայնքի ավագանի ընտրվելու մասին» N 35-Ա որոշում, https://res.elections.am/images/Tec/Decisions/25/2026.35_A_01-11-2026.pdf

[22]Թիվ 25 ԸԸՀ-ի 2026 թ. նոյեմբերի 1-ի «Լոռու մարզի Ստեփանավան համայնքի համամասնական ընտրակարգով 2026 թվականի հոկտեմբերի 25-ի ավագանու ընտրությունների քվեարկության արդյունքներն ամփոփելու մասին» N 34-Ա որոշում, https://res.elections.am/images/Tec/Decisions/25/2026.34_A_01-11-2026.pdf

ԳԼՈՒԽ

07

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստեփանավան համայնքի ավագանու ընտրություններն անցկացվել են մրցակցային պայմաններում՝ չորս կուսակցությունների մասնակցությամբ, իսկ ընտրողների մասնակցությունը կազմել է 68.72%:

Համայնքի տեղամասերում քվեարկությունը և ձայների հաշվարկը հիմնականում իրականացվել են խաղաղ մթնոլորտում: Այլ անձի փոխարեն կամ բազմակի քվեարկության, քվեատուփի լցոնման և արդյունքների կեղծման դեպքեր չեն արձանագրվել: Մի շարք դեպքերում հանձնաժողովների նախագահները դիտորդների դիմումից հետո վերացրել են խնդիրը (25/5, 25/9), իսկ արձանագրված դեպքերի մեծ մասը գրանցվել է ՏԸՀ գրանցամատյաններում:

Միաժամանակ արձանագրված առանձին դեպքերը վկայում են ընթացակարգերի ոչ միատեսակ կիրառման մասին. ՏԸՀ նիստի ուշ մեկնարկ (մինչև 20 րոպե), չհրկիզվող պահարանը բաց թողնելը (25/2, 25/24), դրոշմանիշ փակցված ծրարների մարումը (25/24), քվեարկության ծրարները նախագահի փոխարեն քարտուղարի կողմից քվեատուփից հանելը (25/12), ընտրողների ցուցակում այլ անձի ստորագրությունը (25/16), ինչպես նաև գրանցամատյանում դիտորդի գնահատականն արձանագրելուց հրաժարվելը (25/6):

Առաքելությունն առանձնահատուկ մտահոգություն է արտահայտում 25/24 տեղամասում տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձի բազմակի ներկայության և հանձնաժողովի աշխատանքին միջամտելու փորձերի կապակցությամբ: Նման վարքագիծը կարող է ազդել ընտրողների և հանձնաժողովի անդամների վրա և նվազեցնել վստահությունը գործընթացի նկատմամբ, հատկապես այն պայմաններում, երբ թեկնածուների զգալի մասը հանրային հատվածի աշխատողներ են:

Վստահված անձանց կողմից հանձնաժողովների աշխատանքին միջամտելու փորձերը, միևնույն կուսակցության սահմանվածից ավելի վստահված անձանց ներկայությունը, դիտորդների նկատմամբ ճնշումները և ոստիկանության՝ միջամտելու դժկամությունը վկայում են տեղամասերում կարգ ու կանոնի ապահովման թույլ մեխանիզմների մասին: Քվեարկության և դրան նախորդող օրը թեկնածուների սոցիալական ցանցերի էջերում քարոզչական նյութերի տարածումը ցույց է տալիս, որ քարոզչության սահմանափակման գործող կարգավորումները չեն ընդգրկում առցանց հաղորդակցության բոլոր ձևերը:

Բաց քվեարկության բազմաթիվ դեպքերը հիմնականում պայմանավորված են ընտրողների ցածր իրազեկվածությամբ, հանձնաժողովների անդամների ոչ բավարար պատրաստվածությամբ և դրոշմանիշերի խնդիրներով: Այս դեպքերի մեծ մասում դիտավորության հատկանիշներ չեն դիտարկվում, սակայն խնդիրը համակարգային է և պահանջում է ընտրողների իրազեկման ու հանձնաժողովների վերապատրաստման միջոցառումներ:

Ինքնաասոնձվող դրոշմանիշերի տպագրական թերությունները համատարած բնույթ են կրել և հանգեցրել են ընթացակարգից շեղումների՝ քվեաթերթիկների մարման, սոսնձի օգտագործման, կուտակումների, բաց քվեարկության դեպքերի և դրոշմանիշերի հաշվառման անհամապատասխանությունների: Քանի որ դրոշմանիշը քվեաթերթիկի վավերականության և հաշվառման կարևոր տարր է, այս խնդիրը

պահանջում է ԿԸՀ-ի կողմից ուսումնասիրություն և հրապարակային պարզաբանում:

Ընդհանուր դիտարկում: Արձանագրված ընթացակարգային խնդիրների մեծ մասը՝ ՏԸՀ նիստի ուշ մեկնարկը, չհրկիզվող պահարանը բաց թողնելը, քվեարկության ծրարները նախագահի փոխարեն քարտուղարի կողմից հանելը, վստահված անձանց և կողմնակի անձանց ներկայության նկատմամբ վերահսկողության բացակայությունը, դիտորդի գնահատականը գրանցամատյանում արձանագրելուց հրաժարվելը, վկայում է օրենսգրքի պահանջների կիրառման գործնական հմտությունների պակասի մասին: Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները լրացուցիչ գործնական վերապատրաստման կարիք ունեն:

Քարոզարշավի ընթացքում հաղորդակցության կառուցումը ցուցակների առաջին համարների՝ որպես «համայնքի ղեկավարի թեկնածուների» շուրջ չի արտացոլում ավագանու ընտրությունների համամասնական բնույթը և կարող է շփոթություն առաջացնել ընտրողների մոտ:

Նախընտրական շրջանում արձանագրված խնդիրները համակարգային բնույթ ունեն. համայնքի տեղամասերի մեծ մասն անմատչելի է հաշմանդամություն և տեղաշարժման դժվարություններ ունեցող ընտրողների համար, իսկ թեկնածուների և կուսակցությունների հայտարարագրերի բովանդակությունը և ձևաչափը թույլ չեն տալիս ընտրողներին ստանալ թեկնածուների ֆինանսական վիճակի ամբողջական պատկեր:

ԳԼՈՒԽ

08

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկությունները հիմնված են սույն զեկույցում ներկայացված արձանագրումների վրա և խմբավորված են ըստ հասցեատիրոջ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովին

1. Ուսումնասիրել և հրապարակայնորեն պարզաբանել ինքնասոսնձվող դրոշմանիշերի տպագրական թերությունների բնույթը, տարածվածությունը, պատճառները, քվեարկության արդյունքների վրա հնարավոր ազդեցությունը և ձեռնարկված միջոցները և ապագա ընտրությունների համար սահմանել դրոշմանիշերի որակի նախնական ստուգման ընթացակարգ, ինչպես նաև ՏԸՀ-ների համար հստակ ցուցումներ թերի դրոշմանիշերի դեպքում գործելու կարգի վերաբերյալ:
2. ՏԸՀ անդամների համար, բացի տեսական դասընթացներից, անցկացնել գործնական վերապատրաստումներ (քվեարկության օրվա ընթացակարգերի նմանակմամբ)՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով 07:00-ին նիստի անցկացմանը, քվեաթերթիկները հանելու և ցուցադրելու՝ ԸՕ 68(3) մասով սահմանված կարգին, վստահված անձանց գրանցմանը և նրանց թվի նկատմամբ վերահսկողությանը, չհրկիզվող պահարանի պահպանմանը, քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց ներկայությունը կանխելուն, 20:00-ին քվեարկության սենյակում գտնվող ընտրողների քվեարկելու իրավունքին և դիտորդների գնահատականները գրանցամատյանում արձանագրելու պարտականությանը:
3. Տեղամասային կենտրոնները համապատասխանեցնել ԿԸՀ 2022 թվականի մարտի 24-ի թիվ 17-Ն որոշման պահանջներին, անհնարինության դեպքում՝ քննարկել տեղամասային կենտրոնների տեղափոխումը մատչելի շենքեր:
4. Ապահովել թեկնածուների և կուսակցությունների հայտարարագրերի հրապարակումը ԸՕ 8(6) մասով նախատեսված բաց տվյալների ձևաչափով, որը թույլ կտա դրանք մշակել մեքենայական եղանակով:
5. Իրականացնել ընտրողների իրազեկման արշավ՝ քվեարկության կարգի, քվեարկության խցիկի օգտագործման և գաղտնիության պահպանման, ինչպես նաև համամասնական ընտրակարգով ավագանու ընտրությունների և համայնքի ղեկավարի անուղղակի ընտրության կարգի վերաբերյալ:
6. Ուղիղ հեռարձակման ցանկում ներառել համայնքի բոլոր ընտրական տեղամասերը, նախքան քվեարկության օրը հրապարակել հեռարձակվող տեղամասերի ցանկը, իսկ ընդհատումների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակել՝ ըստ տեղամասերի և պատճառների:

Թիվ 25 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին

1. Ուսումնասիրել 25/2, 25/4, 25/12, 25/16, 25/19, 25/24 և 25/28 տեղամասերում արձանագրված դեպքերը, այդ թվում՝ գրանցամատյանների

գրառումները և քվեարկության նյութերը, և տալ համապատասխան իրավական գնահատական:

2. Քննարկել 25/2 և 25/24 տեղամասերում չհրկիզվող պահարանի պահպանման կարգի խախտման համար հանձնաժողովների նախագահների պատասխանատվության հարցը:
3. Ուսումնասիրել 25/4 և 25/6 տեղամասերում դրոշմանիշերի հաշվառման անհամապատասխանությունների պատճառները:

Ազգային ժողովին

1. Քննարկել թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերում ներկայացված տվյալների ստուգման մեխանիզմ նախատեսելու հնարավորությունը:
2. Քննարկել քվեարկության և դրան նախորդող օրը սոցիալական ցանցերում թեկնածուների և կուսակցությունների կողմից քարոզչական նյութերի տարածման կարգավորումը:

Ոստիկանությանը

1. Տեղամասային կենտրոններում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողներին հրահանգավորել ԸՕ 22(3) և 55(1) մասերով սահմանված պարտականությունների վերաբերյալ և ապահովել հանձնաժողովի նախագահի պահանջներին անհապաղ արձագանքը:

Տեղական ինքնակառավարման մարմիններին

1. Համայնքի և դրա բնակավայրերի հետ առնչվող տեղեկատվական հարթակները չօգտագործել ընտրություններին մասնակցող կուսակցությունների և թեկնածուների նախընտրական նյութերի տարածման համար:
2. Համայնքների և բնակավայրերի ղեկավարներին և այլ պաշտոնատար անձանց՝ քվեարկության օրը ձեռնպահ մնալ տեղամասային կենտրոններում ներկա գտնվելուց և հանձնաժողովների աշխատանքին միջամտելուց, բացառությամբ սեփական քվեարկության:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում (դպրոցներ, մանկապարտեզներ), որտեղ տեղակայված են տեղամասային կենտրոններ, իրականացնել մատչելիության ապահովման աշխատանքներ (թեքահարթակներ, դռների լայնացում, բազրիքներ):

Ընտրություններին մասնակցող կուսակցություններին

1. Ապահովել թեկնածուների և կուսակցության հայտարարագրերի ամբողջական և ճշգրիտ լրացումը:
2. Վստահված անձանց իրազեկել ԸՕ 34-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների մասին, այդ թվում՝ հանձնաժողովի աշխատանքին միջամտելու արգելքի և քվեարկության սենյակում կուսակցության մեկ վստահված անձի ներկայության կանոնի:

3. Զեռնպահ մնալ քվեարկության և դրան նախորդող օրը թեկնածուների և կուսակցության էջերում քարոզչական նյութերի տարածումից, իսկ քարոզարշավում ընտրողներին ճշգրիտ ներկայացնել ավագանու ընտրությունների և համայնքի ղեկավարի ընտրության կարգը:
4. Իրենց թեկնածուներին, հատկապես հանրային պաշտոն զբաղեցնողներին, տեղեկացնել վարչական ռեսուրսի օգտագործման անթույլատրելիության և քվեարկության օրը տեղամասերում վարքագծի կանոնների մասին:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ՝ ԸՍՏ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ

Աղյուսակում ներառված են այն տեղամասերը, որոնցում արձանագրվել են բաժին 5-ում ներկայացված խնդիրները: «Մի շարք տեղամասեր» նշումով ընդհանուր արձանագրումներն աղյուսակում ներառված չեն:

Տեղամաս	Արձանագրված խնդիրներ
25/1	Քվեարկություն առանց քվեարկության խցիկ մտնելու, այլ ընտրողի օգնություն տարեց ընտրողին
25/2	Վստահված անձի միջամտություն (քվեարկության կտրոնների հաշվարկ), բաց չհրկիզվող պահարան, դրոշմանիշերի թերություններ
25/3	Դրոշմանիշերի թերություններ
25/4	Նկարահանում քվեարկության խցիկում, բաց քվեարկություն (16:25), դիտորդի նկատմամբ ճնշում, դրոշմանիշերի թերություններ, դրոշմանիշերի հաշվառման անհամապատասխանություն (2)
25/5	Կուտակում (13:30), դրոշմանիշերի թերություններ
25/6	Դրոշմանիշեր սոսնձամատիտով, մեկ քվեաթերթիկին երկու դրոշմանիշ, դրոշմանիշի փակցում առանց ծրարը ընտրողի ձեռքում լինելու, կտրոնները քվեատուփի վրա, կուտակում, գրանցամատյանում դիտորդի գնահատականն արձանագրելուց հրաժարում, դրոշմանիշերի հաշվառման անհամապատասխանություն (1)
25/7	Դրոշմանիշերի թերություններ
25/9	Քաղաքացին քվեարկելուց հետո մնացել է տեղամասում և հրաժարվել ներկայանալ, ոստիկանությունը չի արձագանքել
25/12	Քվեարկության ծրարները քվեատուփից հանել է հանձնաժողովի քարտուղարը
25/16	ՏԸՀ նիստի ուշ մեկնարկ (07:14), այլ անձի ստորագրություն ընտրողների ցուցակում, դրոշմանիշերի թերություններ, ուղիղ հեռարձակման ընդհատում
25/17	Գրանցամատյանում միևնույն կուսակցության մի քանի վստահված անձի գրանցում՝ առանց դուրս գալու ժամի (լրատվամիջոցի հրապարակման համաձայն), ներառված չէ ուղիղ հեռարձակման ցանկում
25/18, 25/20	Ներառված չեն ուղիղ հեռարձակման ցանկում
25/19	Կողմնակի անձինք հաշվարկի ժամանակ, դրոշմանիշերի թերություններ, դրոշմանիշեր սոսնձով, ներառված չէ ուղիղ հեռարձակման ցանկում
25/24	Համայնքի ղեկավարի միջամտություն, բաց չհրկիզվող պահարան, ընտրություն քվեարկության խցիկից դուրս, դրոշմանիշ փակցված ծրարի մարում (2 դեպք), կուտակում, դիտորդի նկատմամբ ճնշում, դրոշմանիշերի թերություններ, ուղիղ հեռարձակման ընդհատում
25/26	Ուղիղ հեռարձակման ընդհատում
25/27	ՏԸՀ նիստի ուշ մեկնարկ (07:20), դրոշմանիշերի թերություններ
25/28	Գաղտնիության խախտում, դրոշմանիշերի թերություններ, ուղիղ հեռարձակման ընդհատում

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ

Ստեփանավան համայնքի ընտրական տեղամասերը, որոնցում քվեարկության օրը աշխատել են առաքելության դիտորդները: Տեղամասային կենտրոնների տվյալները՝ ըստ ԿԸՀ:

Տեղամաս	Բնակավայր	Տեղամասային կենտրոն
25/1	Ստեփանավան	Թիվ 3 հիմնական դպրոց (Աշոտաբերդ թաղամաս)
25/2	Ստեփանավան	ԲՀԷՍ գործարանի վարչական շենք (Բաղրամյան 124)
25/3	Ստեփանավան	Թիվ 3 մանկապարտեզ (Վ. Տերյան 18)
25/4	Ստեփանավան	Թիվ 1 հիմնական դպրոց (Բաղրամյան 67)
25/5	Ստեփանավան	Ավագ դպրոց (Հ. Մեղապարտի 15ա)
25/6	Ստեփանավան	Մարզադպրոց (Բոնդարև 1)
25/7	Ստեփանավան	Անասնաբուժարանի վարչական շենք (Անդրանիկի 15)
25/8	Ստեփանավան	Թիվ 2 հիմնական դպրոց (Սուրբ Նշան 33)
25/9	Ստեփանավան	Թիվ 6 միջնակարգ դպրոց (Սուրբ Վարդանի 8)
25/10	Ստեփանավան	Թիվ 4 մանկապարտեզ (Մ. Մաշտոցի 17)
25/11	Արմանիս	Հիմնական դպրոցի շենք (2 փող., շենք 13)
25/12	Ուրասար	Հիմնական դպրոցի շենք (2 փող., շենք 36)
25/13	Կաթնաղբյուր	Միջնակարգ դպրոցի շենք (8 փող., 1 նրբ., շենք 1)
25/14	Լոռի Բերդ	Համայնքային կենտրոնի շենք (Աշոտ Երկաթ փ., 1 նրբ., շենք 2)
25/15	Լեջան	Միջնակարգ դպրոցի շենք (1 փող., շենք 1)
25/16	Ագարակ	Միջնակարգ դպրոցի շենք (1 փող., շենք 42)
25/17	Ցաղդան	Հիմնական դպրոցի շենք (1 փող., 1 նրբ., շենք 2)
25/18	Հովնանաձոր	Վարչական շենք (1 փող., շենք 4)
25/19	Կողես	Ակումբի շենք (Կենտրոն, շենք 2)
25/20	Բովաձոր	Հիմնական դպրոցի շենք (3 փող., շենք 4)
25/21	Ուռուտ	Միջնակարգ դպրոցի շենք (1 փող., 3 նրբ., 1 փակղ., շենք 1)
25/22	Սվերդլով	Միջնակարգ դպրոցի շենք (1 փող., 7 փակղ., շենք 1)
25/23	Ամրակից	Միջնակարգ դպրոցի շենք (2 փող., շենք 18)
25/24	Գյուլագարակ	Միջնակարգ դպրոցի շենք (1 փող., շենք 5)
25/25	Հոբարձի	Միջնակարգ դպրոցի շենք (1 փող., շենք 5)
25/26	Վարդաբլուր	Վարչական շենք (Կենտրոնական փ., շենք 56)
25/27	Կուրթան	Մշակույթի կենտրոնի շենք (5 փող., շենք 20/3)
25/28	Գարգառ	Միջնակարգ դպրոցի շենք (13 փող., շենք 3)
25/29	Պուշկինո	Հիմնական դպրոցի շենք (1 փող., շենք 4բ)

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՎԿԱՅԱԿՈՉՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

ՀՀ ընտրական օրենսգրքի գործող խմբագրություն[23].

Նորմ	Բովանդակություն
6(1)	Քվեարկությունը գաղտնի է. ընտրողի համար գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն, կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է
8(5), 8(6)	Թեկնածուների և կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրեր, ներկայացում էլեկտրոնային եղանակով և հրապարակում բաց տվյալների ձևաչափով
8(11)	Քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք, լուսանկարելու և տեսանկարահանելու իրավունքը
8(11.1)	Քվեարկության և ամփոփման ընթացքի տեսանկարահանում և համացանցային հեռարձակում
19(1), 19(1.1)	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը, քարոզչության արգելքը քվեարկության և դրան նախորդող օրը, քարոզչության սահմանումը
22(3)	Տեղամասային կենտրոնից 50 մետր շառավղով խմբերով հավաքվելու արգելք, ոստիկանության պարտականությունը
30, 32	Դիտորդական առաքելության իրավունքը, դիտորդի իրավունքները և գործունեության երաշխիքները
34(2), 34(3)	Վստահված անձանց կողմից միջամտության արգելք, քվեարկության սենյակում կուսակցության մեկ վստահված անձ, գրանցման պարտականություն
46(8)	Վկայականի պարտադիր կրում, ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց ներկայության արգելում
55(1)	Ոստիկանության պարտականությունները, աջակցությունը հանձնաժողովներին նախագահի պահանջով
56(1)	Քվեարկությունը 08:00–20:00, 20:00-ին քվեարկության սենյակում գտնվող ընտրողների քվեարկելու իրավունքը
59(3), 59(4)	Ինքնասոսնձվող դրոշմանիշ, դրա վրա նշվող տվյալները, հատուկ հաշվառում, տպագրումը՝ ԿԸՀ
61(2), 61(3)	Դրոշմանիշերի և կնիքի պահպանում չհրկիզվող պահարանում, նախագահի պարտականությունը՝ ապահովել կարգ ու կանոն
64(1)	ՏԸՀ նիստը 07:00-ին, վիճակահանություն
65(1), 65(5)	Քվեարկության սկիզբը 08:00-ին, քվեարկության սենյակում ընտրողների թվի սահմանափակում (ոչ պակաս, քան 15)
66(8)	Ընտրողն ստորագրում է ընտրողների ցուցակում իր տվյալների դիմաց
67(6), 67(7), 67(8)	Գաղտնիության պաշտպանություն, դրոշմանիշի փակցում ծրարի կտրվածքի միջով, դրոշմանիշերի նոր խմբաքանակի տրամադրում և կտրոնների հաշվառում
67(9)	Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնելը

[23] ՀՀ ընտրական օրենսգիրք, գործող խմբագրություն, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, https://www.arlis.am/hy/acts/230464 (ստուգված է 2026 թ. հոկտեմբերի 28-ին):

Նորմ	Բովանդակություն
67(10)	Սխալ լրացված կամ վնասված քվեաթերթիկի մարում և նոր քվեաթերթիկի տրամադրում
67(12), 67(13), 67(14)	Քվեարկելուց հետո սենյակից անհապաղ դուրս գալը, թեկնածուի ներկայության արգելքը, գնահատականի արձանագրումը գրանցամատյանում
68(1), 68(3), 68(6), 68(7)	Քվեարկության ավարտը, ծրարները քվեատուփից հանելը և ցուցադրելը նախագահի կողմից, ծրարի մարումը, մարված քվեաթերթիկները՝ որպես անվավեր
70(1)	Սահմանված նմուշի քվեաթերթիկ
72(1), 72(4)	Առաջին անճշտության հաշվարկը, անճշտությունների արձանագրումը
141(2), 141(3)	Ավագանու ընտրությունների արդյունքների ամփոփման ժամկետը, 4 և 6 տոկոսի շեմերը
142.1(1), 142.2(2)–(4)	Համայնքի ղեկավարի անուղղակի ընտրությունը ավագանու կողմից, ցուցակի առաջին համարի ընտրվելը 50 տոկոսից ավելի տեղերի դեպքում

Այլ իրավական ակտեր.

Նորմ	Բովանդակություն
ՎԻՎՕ 40.15	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք. տեղամասային կենտրոն չմտնելու կամ տեղամասային կենտրոնը լքելու բանավոր պահանջը չկատարելու համար պատասխանատվություն (տուգանք՝ 50 000 դրամ)
ՔՕ 210	ՀՀ քրեական օրենսգիրք. ընտրական հանձնաժողովի աշխատանքը խոչընդոտելու, ընտրողի ազատ կամքի վրա ազդելու համար պատասխանատվություն
ՔՕ 215	ՀՀ քրեական օրենսգիրք. քվեարկության գաղտնիությունը շահադիտական նպատակով խախտելու համար պատասխանատվություն
ԿԸՀ թիվ 11-Ն որոշում	Ընտրական փաստաթղթերի պահպանման կարգ
ԿԸՀ 24.03.2022 թ. թիվ 17-Ն որոշում	Տեղամասային կենտրոնների մատչելիության պահանջներ

ԱԶԱՏ ՔՎԵ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՂ

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Telegram
@ArmVoterBot

Instagram
@azat_qve

Facebook
azatqvemonitoring

055 303942 · azatqve2026@gmail.com

Ստեփանավան համայնքի ընտրությունների երկարաժամկետ դիտարկումն իրականացրել են «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ն և «Երիտասարդները հանուն փոփոխության» ՔՀԶ ՀԿ-ն: Քվեարկության օրվա կարճաժամկետ դիտարկումն իրականացվել է «Պրո Ինթերնեյշնլ»-ի ֆինանսական աջակցությամբ և «ՍԴ Պլատֆորմ Հայաստանի» հետ համագործակցությամբ:

Սույն զեկույցի բովանդակության համար պատասխանատվություն են կրում «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ն և «Երիտասարդները հանուն փոփոխության» ՔՀԶ ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի «Պրո Ինթերնեյշնլ»-ի և «ՍԴ Պլատֆորմ Հայաստանի» տեսակետները: